

## ՍՈՒԳԱԲԱՆԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

### ԱՐՄԵՆ ՄՈՒՇԵՂՑԱՆ

Ապաւէն: Գործածական է եղել դասական հայերենում և շարունակում է կիրառութիւնը ժամանակակից հայերենում: Մեզ հայտնի միակ ստուգաբանութիւնը պատկանում է է. Բենվենիստին, որը կանխագրում է հին իրանական \*aravaina ձևը «չուրջը զննել ճողոպրելու համար»<sup>1</sup>, որին զուգահեռ զարգացել է «ապաստան փնտրել» իմաստը: Ինչ վերաբերում է բառի փոխառութիւնի աղբյուրին, ապա մենք ձեռնսլազ ենք մնում ընդհանուր իրանական նախածէ վերականգնելու խնդրում. ամեն զեւթում նկատելի է, որ հայերենի համար փոխառութիւնի աղբյուրը միջին իրանական լեզուներից մեկն է: Անդրադառնալով բառի իմաստային կողմին պիտի նշենք, որ Բենվենիստի առաջարկը հիմնավորված կլիներ, եթե առաջադրվեին համեմատելի եզրեր. հարցն այն է, թե ինչ կազմութիւնն էր զործունենք բուն փոխառութիւնի աղբյուրում՝ բարդութիւնն, թե անհամար կազմութիւնն էր: Ի տարբերութիւն Բենվենիստի, որը հակված է բառը դիտարկել որպէս բարդութիւն, մենք այն դիտում ենք ընդհանրապէս կազմութիւն, և այդ պատճառով բավարար ենք համարում միջին իրանական \*arawen- ձևի վերականգնումը: Այդ տեսանկյունից բառի ստուգաբանութիւնն աջակցութիւն է գտնում, երբ այն համեմատում ենք սլավոնական լեզուներում պաշտպանված նույնիմաստ և ձևավորմամբ շատ մոտ այն բառային միավորների հետ, որոնց համար կանխագրվում է հին սլավոններեն \*ourъvati (հմտ. ոռու. урвать, այստեղից բայանունը урвание, որ հայերենի ստուգաբանական համարժեքն է): Ի դեպ, սլավոնական համապատասխան ձևերը նույնպէս ստուգաբանված չեն<sup>2</sup>: Դրանց համար ժամանակին Պիզանիի կողմից զուգահարվել է գերմ. hoffen «հույս տածել»<sup>3</sup>: Այն հարցը, թե ինչ հարաբերութիւնն է մեջ են սլավոնական և հայկական զուգահեռ ձևերը կարելի է տալ միայն մեկ պատասխան. դրանք պետք է դիտվեն որպէս փոխառութիւններ հնդիրանական լեզվական ոլորտից, ըստ որում փոխառութիւնի աղբյուրները տարբեր են. եթե հայերենի համար դա միջին իրանական լեզուներից մեկն է, ապա այստեղ սլավոնական ձևերն ավելի հակված են հին հնդկերենի կողմը, որտեղ մեզ հետաքրքրող միավորն արձանագրված է upān- բառարմատի տեսքով, որտեղից է upavati բայաձևը «փայփայել» (այստեղից «հույս փայփայել»): Այսպիսով, ինչպէս ցույց են տալիս սլավոնական լեզուների և հին հնդկերենի զուգահեռ

<sup>1</sup> E. Benveniste. Elements parthes en arménien. — "Revue des Etudes Armeniennes", T. 1, 1964, p. 6.

<sup>2</sup> М. Фасмер. Этимологический словарь русского языка. Т. IV, М., 1964 — 1973, с. 164.

<sup>3</sup> V. Pisanii. "Paideia", 1957, N 2.

ձևերը՝ բուն փոխառություն աղբյուրում հայերենի համարժեքը պետք է գործածվեր որպես բայանուն և առնչվեր այնպիսի նախնական իմաստությունների հետ, ինչպես «հենվել», «հակվել դեպի ետ», որտեղից թերևս զարգացել են երկրորդական, վերացարկված իմաստները՝ «վստահել», «պատսպարվել»: Վերը նշվածը թույլ է տալիս նաև հայերենում հաճախական գործածություն ունեցող յապաւել/ապաւել բայը դիտել որպես քննվող բառի հիմքից սերված ձև:

Ընկոյգ: Առաջին վկայությունները Աբ. Գրքից են<sup>4</sup>: Միջինհայերենյան և բարբառային ձևերը փոքր-ինչ տարբեր են ընկուզ, ընգուզ, օնգուզ, ունգուզ և այլն<sup>5</sup>, պատկանում է -ի կամ ի-ա հոլովման: Հայ հին մատենադրույթյան մեջ ավանդված են նաև ընկոյգ արքայական «չաղանակ» (nux Castanea) և ընկոյգ հնդկաց «կոկոս» (Cocos nucifera L.): Ինչպես կտեսնենք ավելի ուշ հնդկական ծագումն ընկած է եղել պտղի անվանման հիմքում: Աճառյանը դտնում է, որ Մերձավոր Արևելքում տարածված ձևերից ոչ մեկը չէր կարող հայերենի համար աղբյուր ծառայել. ընդհակառակը՝ նա վերականգնում է \*enqouz-ը՝ որպես հայերենի նախաձև, որտեղից էլ բխում են սրա դրսևորումները սեմական լեզուներում, որ մասնավորապես եբրայերենում արտացոլվում է որպես օցօ: Նա եզրակացնում է, որ բառը հայերենում ժառանգված է ուրարտերենից և հղում է Հյուսիսային<sup>6</sup>:

Ավելի ուշ էդելմանն ու Կլիմովը քննում են այս մերձավորարևելյան գուգաբանությունը այլ տեսանկյուններից ևս, ընդգրկելով իրանական, կովկասյան, սեմական և թուրքական լեզվական ոլորտները: Ինչպես նշում են հեղինակները, և սա կարևոր է անշուշտ բառի ստուգաբանության համար՝ ընկույգը (Jugians regia) Հունաստան է ներթափանցել Անատոլիայից և անգամ անտիկ աղբյուրներում այն շփոթվել է «չաղանակի» կամ «նշի» հետ: Ինչ վերաբերում է Կովկասին, ապա պտուղը ներմուծվել է այնտեղ Իրանից՝ անգամ միջին դարերում, այդ պատճառով Կովկասը չի կարող դիտվել որպես «ընկույգի» հայրենիք<sup>7</sup>: Հիշված ուսումնասիրողները համաձայն են նախապես Ստեբլին Կամենսկու արտահայտած այն կարծիքի հետ, թե բառի նախնական ձևն իրանական է, և նրանում արտացոլված է gauza «թաքցնել» կամ «ծածկել» հիմքը, կանխադրելով \*agauza: Նշենք, որ Ստեբլին Կամենսկին վերականգնել է \*hamgauza ձևը, որի մեջ ham-ը նա համարում է նախաբայ<sup>8</sup>: Անշուշտ, բառի իրանական ծագումը համոզիչ է, սակայն նույնը չի կարելի ասել բառի վերականգնման մասին, որովհետև դժվար է մեկնաբանել, թե ինչպես \*hamgauza նախաձևի ham-

<sup>4</sup> Մենդ. 43.11, Թուոց 17.8:

<sup>5</sup> Հ. Ա ճ ա ո յ ա ն. Հայերեն արմատական բառարան (այսուհետև՝ ՀԱԲ). հ. 2, Երևան, 1973, էջ 130-131:

<sup>6</sup> H. H ü b s c h m a n n. Armenische Grammatik (այսուհետև՝ Arm. Gram.). Esrter Teil. Hildesheim. New York, 1972, S. 393.

<sup>7</sup> Д. Э д е л ь м а н & Г. К л и м о в. Из истории одной древнепереднеазиатской изоглоссы. — "Ирано-афразийские языковые контакты", М., 1987, с. 163.

<sup>8</sup> И. С т е б л и н К а м е н с к и й. Очерки по истории лексики памирских языков: названия культурных растений. М., 1982, с. 110—111.

նախաբայական մասնիկը հայերենում վերածվեց *րն-*ի և համապատասխանաբար *ա-*ն վերածվեց *րն-*ի ըստ էդելմանի և Կլիմովի: Նրանց կողմից վերականգնված միավորները թույլ չեն տալիս բացատրել ոչ հայկական, ոչ էլ օսական ձևերը. ի գեպ հարկ է նշել, որ հայերենի համար ամենից մոտ ձևերն են օսական Իրոնի բարբառով *աղսն* և Դիգորի բարբառով *աղսոզ* ձևերը: Պետք է ասել, որ որոշ գեպքերում մենք լեզվի մեջ հանգիպում ենք տարածամանակյա կրկնակների: Այս գեպքում այգպիսի երևույթի կարելի է հանդիպել միջին հայերենում ուր արձանագրված է հնդլավզ տերմինը «կոկոս» նշանակութամբ, որ ծագում է արարերեն *hindjavz*-ից, որ ինքնին ենթադրել է տալիս նախագրային շրջանում \*հնդկոյզ ձևի գոյություն մասին. սա էլ պիտի հանել միջին իրանական \*հնդգոզ-ից, որ բուն նշանակում է «հնդկական ընկույզ»: Ինչ վերաբերում է բառի հնչապատկերին, ապա կարծում ենք, որ *dg>g* միաձուլումը տեղի է ունեցել միջին իրանական փուլում: Հարկ է նշել, որ *javz*-ը «ընկույզ» արարերենում միջին իրանական *goz*-ի համարժեքն է: Վերևում նշեցինք, որ միջին հայերենում գործածվել են հնդլավզ-ը և նույնի պատճենումը, այն է՝ ընկոյզ հնդկաց, որ մեր կարծիքով բավարար ապացույց է նման բառամիավորի գոյություն օգտին հնարույն շրջանում: Թեև միջնադարյան հնդլավզ-ը նշանակում է «կոկոս», սակայն ավելի հին ժամանակներում դրա կրկնակ ձևը պիտի որ նշանակեր «ընկույզ», ինչպես մեզնից անկախ ենթագրել է Մերի Բոյսը<sup>9</sup>:

Կամուրջ: Այս բառն ավանգված է դասական շրջանից և ունի բազում տարբերակներ հայկական բարբառներում՝ կարմունջ, կարմուջ, գարմունջ, կարմոնջ և այլն<sup>10</sup>: Աճառյանն այն համարում է բնիկ հայկական բառ, որի բացառիկ զուգահեռ ձևն է հուն. *γῆφυρα* «կամուրջ»: Թեև նա համեմատում է այն հունական զուգահեռի հետ, միևնույն ժամանակ զգուշացնում է, որ դրանք այնքան էլ միանման չեն ընդհանուր նախաձև վերականգնելու համար: Համաձայն Աճառյանի՝ *-մ-*ն հայերենում կարող էր ի հայտ գալ ժողովրդական ստուգաբանություն արդյունքում: Հետագայում Մեյեն նույնպես անդրադառնում է այս միավորին և պնդում հայ-հունական համապատասխանությունը, սրանց ավելացնելով նաև՝ *δεφουρα*, *διφουρα*, *βλέφουρα* և մի քանի այլ բարբառային ձևեր<sup>11</sup>: Հակառակ այս տեսակետներին՝ Հյուբսչմանը գտնում է, որ բոլոր առաջարկված համեմատությունները խոցելի են<sup>12</sup>:

Վերջերս, հայ-հունական ենթադրվող զուգահեռ ձևերի վերլուծությունն է անդրադարձել Ջեյմս Քլաքսոնը<sup>13</sup>, որտեղ նա եզրակացնում է, թե այդ բառերի միջև ոչ մի կապ չկա, որ դրանք պարզապես ինքնուրույն բառամիավորներ կամ առանձին-առանձին փոխառություններ են: Ան-

<sup>9</sup> М. Б о й с . Зороастрийцы. М., 1988, с. 158, 158<sub>3</sub>.

<sup>10</sup> ՀԱԲ, Հ. 2, էջ 502-503:

<sup>11</sup> A. M e i l l e t. Le nom de pont.— BSL, N 22. Paris, 1920, p. 17-18, Ա. Մ ե յ ե. Հայագիտական ուսումնասիրություններ. Երևան, 1978, էջ 189:

<sup>12</sup> H. H u b s c h m a n n. Նշվ. աշխ., էջ 457:

<sup>13</sup> J. C l a c k s o n. The Linguistic Relationship between Armenian and Greek.— "Publication of the Philological Society", 1994, N 30, p. 134-135.

չուշտ բառաքնությունը ճիշտ եզրահանգման է բերել հեղինակին: Մեր կարծիքով հայերենի կամուրջ-ը փոխառություն է. այդ ապացուցելու համար անհրաժեշտ է նկատի ունենալ արտալեզվական փաստերը: Ակնհայտ է, որ հին ժամանակներում «կամուրջները» հիմնականում ծառայել են որպես ամրոցների պաշտպանական կառույցների անբաժան մասեր. գրանք յուրաքանչյուրի հետ հաղորդակցությունը ապահովելուց բացի մի տեսակ ճակատային գծի ամրություններ են եղել:

Բառն ըստ մեզ բարգություն է, և ծագում է միջին իրանական աղբյուրից, այն է՝ \*kamborj: Բառի ներքին ձևն ինքնին հուշում է դրա նշանակությունը, այն է՝ «ցած աշտարակ». առաջին մասի մեջ տեսնում ենք իրանական kam- բառ-մասնիկը՝ «նվազ» իմաստով, երկրորդ մասն արտացոլում է նոր սլարսկերենում և հատկապես սեմական լեզուներում լայնորեն տարածված մի միավոր, որ հին շրջանում հայտնի էր ոչ քմայնացած ց-ով, գործածվելով մասնավորապես արամեերենում ու նաև ուրարտերենում որպես՝ bũrga(na) «աշտարակ», որ ավանդվել է հայ մատենագրության մեջ բուրգն (սեռ. բրգան) ձևով: Պետք է ենթադրել, որ սեմական քմայնացած տարբերակը թափանցել է իրանական լեզվական ոլորտ միջին իրանական փուլում, ըստ երևույթին մ.թ. I–IV դդ., այսինքն՝ մինչև քննվող բառի հայկական ավանդույթ մուտք գործելը: Ինչ վերաբերում է կամ-/քամ- կազմիչին, ապա այն «գործածող» նոր փոխառություններից կառանձնացնենք քամբախ-ը, որ փոխառված է նոր պարսկերեն kambaxt-ից:

Նախիջտ: Բառը ստուգաբանական վերլուծության է ենթարկվել XIX դ. վերջից սկսած<sup>14</sup>: Վերջին տարիներին բառի քննությանն են դիմել երկու ուսումնասիրողներ: Լ. Հովհաննիսյանը բառի հիմքի մեջ տեսնում է նազ արմատը: Բառը նա մեկնում է որպես -ist ածանցով բաղադրված կազմություն, որտեղ շ-ն s-ի ազդեցության տակ փոխարինվել է շ-ով նույնպիսի համաբանություններ, ինչպիսին կարելի է գտնել միջ. իրան.\*patsac > հայ.\*պատսած>պատշած օրինակի մեջ<sup>15</sup>: Ավելի ուշ Փերիխանյանը<sup>16</sup> այս ստուգաբանությունը վիճարկում է մի քանի տեսանկյուններից. առաջին՝ բառի հետ համեմատության մեջ դրվող միավորները՝ bwnyst և manist, գործող անձի դրսևորումներ չեն, երկրորդ՝ դրանց վերջնահնչյունը ստուգաբանական տեսակետից դեր չի խաղում, երրորդ՝ naz բառարմատի իմաստը փոքր-ինչ տարբեր է, քան այն ներկայացվում է Հովհաննիսյանի մոտ: Փերիխանյանը նաև քննում է մի քանի իմաստույթներ, որոնք իր կարծիքով կարող են բավարարել բառը ստուգաբանելիս՝ առաջին հերթին՝ «պտտվել, յուրօր սլտույտ գործել» և երկրորդ՝ «խոնարհվել»: Հետադուր անգրագառնում է նաև քննվող բառի կազմությանը և նախապատվությունը տալիս ընդհանուր կաղապարին: Վերջապես նա առաջարկում է երկու տարբերակ՝ \*nazī-sta «խոնարհված կանգնել, սլաքել» որտեղից է

<sup>14</sup> ՀԱԲ, հ. 3, էջ 418:

<sup>15</sup> P. C o n s i d i n e. Two Armenian Runners. – “Annual of Armenien Linguistic” (այսուհետև՝ AArML), N 8 p. 18, ՀԻՓ, էջ 252–253:

<sup>16</sup> А. П е р и х а н я н. Материалы к этимологическому словарю древнеармянского языка. Т. 1, Ереван, 1993, с.62–66.

«նաժիշտ» և \*nazi-stā «չուրջը կանգնած» որտեղից էլ ըստ նրա գարգացել է «ծառա» իմաստը:

Պիտի ասել, որ Հաճախ լեզվաբանական լուծումները ավելի մատչելի են, քան կարելի է ենթադրել առաջին Հայացքից: Բոլոր Հնարավոր լուծումներից մենք նախընտրում ենք *nabā.nazdistā* «մերձավորագույն ազգականներ» ավեստայական կաղապարը, որ թեև առաջարկվել է շատ վաղուց, բայց բավարար լեզվաբանական հիմնավորում չստանալու պատճառով վիճարկումների տեղիք է տվել: Միակ ընդունելի բացատրությունն այս դեպքում, մեր կարծիքով՝ բաղադրյալ կաղապարի առաջին անդամի գեղչումն է և երկրորդի դործածությունն ամբողջի փոխարեն, որի համար կարելի է բերել բաղամաթիվ օրինակներ տարբեր լեզուներից, որտեղ որոշիչ-որոշյալ կաղապարների դեպքում գեղչվում է որոշյալը հմմտ. *cattolico cristiano cattolico*-ի փոխարեն կամ *germanus frater germanus*-ի փոխարեն: Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ հին Հայկական իրականություն մեջ «նաժիշտներ» են կոչվել թագուհու իգական սեռի մերձավորագույն ազգականները:

Նապաստակ: վկայված է Սուրբ Գրքում<sup>17</sup> և գործածությունը շարունակում է Հայերենի բոլոր փուլերում: Հայտնի են մի շարք բարբառային տարբերակներ՝ լապաստակ, ալապագտրակ, նաբասդագ, լապուսգագ, լասյուստրակ և այլն: Ըստ Աճառյանի՝ կասկած չի հարուցում այն, որ նախնական տարբերակը եղել է ն-ով և Հետևապես բառի ստուգաբանությունը դիմելիս ն-/լ- սկզբնահնչյուններից նախապատվությունը պիտի տալ ն-ին: Իսկապես, գասական աղբյուրներում այն արձանագրված է որպես ն-ով սկսվող բառ: Երկրորդ կարևոր գործոնը, որ հետաքրքրել է Աճառյանին՝ -տր- հնչյունակապակցության գրսևորումն է բարբառային մի շարք ձևերում, որ նրան բերել է այն համոզման, թե բառը դրափոխված ձևով արտացոլված պիտի լիներ հնագույն տարբերակի մեջ և Հետևապես նա վերականգնում է՝ \*նասլարստակ<sup>18</sup>:

Հետագայում բառի քննությունն է դիմել Փերիխանյանը<sup>19</sup>, ուր նա մատնանշում է քննվող միավորի տարուական բնութի: Հեղինակը Հայերենի փոխառությունից աղբյուր է դիտում պրթև. \*nipastak-ը, որ իր հերթին բխում է հին իրանական \*nipastaka-ից: Բառահիմքը նա վերլուծում է որպես *ni+pat-* կամ *ni+pad-*, որտեղ արտացոլված են ըստ նրա՝ *pat-* «թուչել» կամ *pad-* «ընկնել» բառարմատները: Այս ստուգաբանությունը թույլ կողմերին անդրադարձել է Քոնսիդինը՝ նույն պարբերականում<sup>20</sup>, հիմնականում շեշտելով բառի և վերականգնված միավորի ձայնավորման տարբերությունը: Նա գտնում է, որ *nipastak*-ը Հայերենում կարող էր արտացոլվել միայն որպես *npastak-* և անդամ պարզ չէ նրա կարծիքով, թե բառը իրանական ծագում ունի՝, թե ոչ:

<sup>17</sup> Լիւդ., 11.6:

<sup>18</sup> ՀԱԲ. հ. 3, էջ 428:

<sup>19</sup> AarmL, N 3, pp. 43-46.

<sup>20</sup> P. C o n s i d i n e. Նշվ. աշխ., 1984, էջ 54-55:

Ավելի ուշ Բեյլին քննում է բառի բարբառային տարբերակներից մեկը՝ լատաստակը նույն պարբերականում<sup>21</sup>։ մասնավորապես սրան միացնելով ալապազարակ ձևը։ Պետք է ասել, որ վերջինս մեկ անգամ հանդիպում է Այգեկցու առականներից մեկում, և ըստ էության սխալագրություն է. այգտեղ պարզապես շփոթվել են տ և ա տառերը գրաֆիկական նմանության պատճառով և այն քննության առարկա դարձնելը, կարծում ենք, անտեղի է։ Քննության երկրորդ մասը, որտեղ նա անդրադառնում է լատաստակ ձևին, մեկնությունն իսկապես համոզիչ է թվում։ Բեյլին բառը գուրս է բերում –asta- (Հ.-ե.–es-10-1-0s-10-) և -ak կրկնաձայն կազմությունից, իսկ արմատը բխցնում Հ.-ե.\*lep-ից, որի արտացոլումները բազմաթիվ լեզուներում գործածվում են որպես «շուրթ», այդ թվում միջին իրանական լեզուներում, ուր այն արձանագրված է lap- ձևով և ըստ իս սրանց գումարվում են նաև «թի. խոփ» և «թաթ» նշանակող ածանցյալները՝ սլավոնաբալթիական լեզվական ոլորտում, որոնցից հայերենին հատկապես մոտ են լտշ. lapsta/lapusta «խոփ» ձևերը։ Սա նշանակում է, որ հայերենի փոխառության աղբյուրում անունը կարող էր ստեղծվել «երկարականջ» նշանակելու տրամաբանությունով։ Եթե իսկապես անունը հանգեցվելու է Հ.-ե.\*lep- արմատին, ապա -ր-ն պետք է համարել լոկ միջաձայն և նույն արմատի արտացոլումը տեսնել ժողովրդախոսակցական լպստել/լպստկել բառերի մեջ։ Այնուամենայնիվ, այս վերականգնումը պետք է ընդունել որոշ վերապահությամբ, քանի դեռ իրանական աղբյուրներում չեն հայտնաբերվել անփոփոխ ապացույցներ սրա օգտին։

Վերջերս բառի ստուգաբանությանը հպանցիկ անդրադարձել է նաև Ջոշուա Կատցը մի աշխատության մեջ, որ նվիրված է խեթական անորոշ ծագման tapakalia- տերմինին. նա փորձում է հայերեն անունը տրոհել napas-tak կամ napa-stak ձևությունների և դրանց մեջ առաջինը համեմատել լուվիերեն tapas, լատիներեն lepus անունների հետ<sup>22</sup>։

Ընդհանուր առմամբ բառի ստուգաբանության համար դժվարություն է հարուցում երեք խնդիր. նախ՝ սկզբնային ն-/լ-ի նախնականության հարցը, երկրորդ՝ -ր-ն որևէ դեր խաղացել է բուն անվան մեջ, թե հետագայում է ներմուծվել որպես միջաձայն և երրորդ՝ կենդանու անվանման հայտնի իմաստությունների շարքում «շուրթ» իմաստությի հետ կապվող այլ դրսևորումներ չեն հանդիպում բացառությամբ լատիներեն lepus-ի, որ կարող է ջլակցող հանգամանք դիտվել։ Հաշվի առնելով այն, որ անունը կարող էր ի հայտ դալ տարուական հողի վրա, ապա հնարավոր ենք համարում դրա առնչությունն Աստծու կողմից պատժված այն կենդանիների հետ, որոնք առասպելներում հանդես են դալիս Աստծու կեղծ պատգամաբերի դերում և հետևապես նզովվում մարդկանց կողմից<sup>23</sup>։ Այստեղից կարելի է հանել նրա միջին պարսկերեն \*anparistak նախաձևը, որ դրափո-

<sup>21</sup> H. H ü b s c h m a n n. Նշվ. աշխ., №10, էջ 2–4:

<sup>22</sup> J. K a t z. Hittite tapakaliya<as>. – In: “Anatolisch und Indogermanische Anatolico e indoeuropeo: Alten des Kolloquiums der Indogermanischen Gesellschaft”. Pavia, 2000. September 22–25. Innsbruck, 1998, p. 40.

<sup>23</sup> Д ж. Ф р э з е р. Фольклор в Ветхом Завете. М., 1989, էջ 30–51.

խուլթյամբ վերածվել է \*napar'stak-ի «նչ պաշտելի. անիծված»։ Ի դեպ, նույնի առանց -ak-ի պարթևական համարժեք հիմքը պահպանվել է հայերենում ամբարիշտ/ամպարիշտ ձևով։

Այսպիսով, հնարավոր լուծումները երկուսն են՝ կամ «երկարականը» նշանակելու համար «թի» նախնական իմաստույթից ածանցվել է -ak անվանական կազմիչով ձևը, կամ անունը ստեղծվել է նույնպես տարուական հիմնավորմամբ՝ «նչ պաշտելի. անիծված» իմաստից։

## ЭТИМОЛОГИЧЕСКИЕ ЗАМЕТКИ

АРМЕН МУШЕГЯН

### Резюме

*Արաբեն* "надежда" — основываясь на данных славянских языков и древнеиндийского, где появляются некоторые очень похожие формы — д.-сл. \**oupvati*, откуда русс. *уповать* и в частности дивербальная форма *упование* — эквивалент армянской формы и д.-инд. *upavati* "лелеять" — автор реконструирует средне-иранское \**arawen*, деривацию с *-ên*, тогда как основа кажется появляется в арм. глаголах - *yarawel/apawel* "убавить; ампутировать; сокращать". *энкоуз* "орех" — автор считает это слово как диахронический дублет вместе с средне-армянским *hndjavz* "кокос". Последний происходит от араб. *hindjavz*, который состоит из двух компонентов — *hind* "индийский" и *jauz* "орех". Кстати, калька последнего встречается в средне-армянском в виде *энкоуз hndkac'* и заставляет автора реконструировать дописьменную армянскую \**hndkoуз > энкоуз*. *Камоврј* "мост" — слово в армянском является заимствованием из средне-иранского \**kamborj* "низкая башня". Вторая часть слова - *-borj* употребляется в семитских языках и ново-персидском как "башня" или "созвездие", то есть "башня в небесах". Видимо, слово входило в персидский в I–IV вв. н. э., тогда как непалатализованные формы последнего известны из арамейского, а также урартского как *burga(na)*, которые передаются в армянском в виде *bowrgn* (род. *brgan*) и продолжает употребление в армянском до сих пор. *Назист* "горничная" — заранее оно было сравнено с авестийским *nabā.nazdista*- "ближайшие родственники", но поскольку не получило надлежащей лингвистической интерпретации, то не внушило доверия и оспаривалось некоторыми учеными. Автор возвращается к предыдущей формуле и объясняет это как проявление эллипсиса. *Напастак* "заяц" — фигурируют две возможные этимологии для этого слова. Первая была предложена Бейли, который выводит слово из иранского *lap* "губа" (и.-е. \**lep-*), что находит поддержку в латинском *lepus* "заяц" с двойной аффиксацией *-asta* (и.-е. *-es-to-/os-to-*) и *-ak* в иранском. Здесь мы должны добавить еще балтославянские суффиксированные формы, означающие "лапа", "лопата", прежде всего латыш. *lāpsta/lāpusta* "лемех", и это означает, что имя по всей вероятности создавалось - "обозначать его большие уши". Вторая этимология предлагается здесь автором, согласно которому оно могло происходить от средне-персидского \**anparistak > \*napar'stak*, что также основывается на табуистической семантике слова только если начальная *p-* имени передает оригинал.

## ETYMOLOGICAL REMARKS

ARMEN MUSHEGHYAN

## S u m m a r y

*Apawên* 'last resort' – based on the evidence provided by Slavonic and Old Indian where some very similar forms occur – Old Slavonic \**oupъvati*, hence Russ. *upovaj* 'to reckon upon' and particularly the deverbial form *upovanije* 'resort', an equivalent of the Armenian form, and Old Indian *upavati* 'cherish', the author restores Middle Iranian \**apawen*, taking it as a form suffixed by *-en*, while the base seems to appear in Armenian verbs *yapawel/apawel* 'reduce; amputate; abbreviate'. *Յնոյշ* 'nut' – the author considers it to be a diachronic doublet along with Middle Armenian *hndjavz* 'coconut'. The latter originates from Arab. *hindjavz*, id. that consists of two components - *hind* 'Indian' and *jauz* 'nut'. By the way, the calque of the latter occurs in Middle Armenian as *Յնոյշ հնդկաշ* and leads the author to restore preliterate Armenian \**hndkoyz* > *Յնկոյշ*. *Kamowrj* 'bridge' – the word in Armenian is a loan from Middle Iranian \**kamborj* 'low tower'. The second part *-borj* is employed in Semitic languages and New Persian as 'tower' or 'constellation'; that is, 'tower in the heaven'. Probably the word entered into Persian in the 1st-4th cent. AD, while its non-palatalized forms are known from Aramaic and also Urartian as *bürga(na)* rendered in Armenian as *bowrgn* (gen. *brgan*) which continues its employment in Armenian till now. *nazist* 'maid' – formerly it was compared with Avestan *naba.nazdista-* 'the closest kin', but because of vague linguistic interpretation it hadn't inspired any confidence and was disputed by some scholars. The author returns to the initial formula and explains it as an outcome of ellipsis. *napastak* 'hare' – two possible etymologies for this name occur. The first one is suggested by Bailey who derives it from Iranian *lap* 'lip' (IE \**lep-*), which finds a support in Latin *lepus* 'hare' with a double extension of *-asta-* (IE *-es-to-/os-to-*) and *-ak* in Iranian. Here might be also added Balto-Slavic suffixed forms denoting 'paw', 'spade', especially Latv. *lapstallâpusta* 'ploughshare', which means that the name in the original source might have been created to denote his large ears. The second etymology offered here by the author may come from Middle Persian \**anparistak* > \**napar'stak*, also based on its tabooistic semantics only if the initial *n-* of the name is original.